

ՄԻՋՆՈՐՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻ ՄԻՋՆՈՐՐՈՒԹՅԱՄԲ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 15 ԳԵՐԵՎԱՐԿԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու ակտիվ միջնորդությամբ եւ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի ներգրավմամբ, ադրբեջանական կողմը ազատ արձակեց հակամարտության ընթացքում ձերբակալված Հայաստանի 15 քաղաքացիների, որոնք Վրաստանի տարածքով վերադարձան իրենց ընտանիքներ:



Վրաստանի կառավարության աշխատակազմի հայտարարության վարչության համաձայն, Վրաստանի վարչապետի ակտիվ ներգրավմամբ հնարավոր է դարձել նաեւ հայկական կողմի կողմից ակադեմիական տարածքների վերաբերյալ կարելու

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ, ՄԵՐ ՎՐԱՅ ԵՂՔԱՅՐՆԵՐԻ ԵՎ ԱՄՆ-Ի ԶԱՆՔԵՐՈՎ ՄԵՐ ԳԵՐԵՎԱՐԿԱԾՆԵՐԸ ՎԵՐԱՂԱՐՁԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող, 77 վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը Գավառում բնակիչների հետ հանդիպմանը մանրամասներ ներկայացրեց 15 հայ ռազմագերիների՝ Հայրենիք վերադառնալու հետ կապված:



«Երկու օր առաջ ես հանդիպում ունեցա ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի հետ, ով ասաց, որ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենի համոզարարությամբ ունի առաքելություն այս օրերի ընթացքում ինչ-որ մի ճեղքում ապահովել գերիների վերադարձը: Ես բնականաբար ասացի, որ մենք պատրաստ ենք: Ահա այսօր գործադրված ջանքերի, այդ

թվում Վրաստանի վարչապետի, վրաց մեր եղբայրների, Եվրամիության մեր գործընկերների ջանքերի արդյունքում, մեր եղբայրները եկան Հայաստան: Եվ հիմա կտեղափոխվեն բուժօգնության: Անպայման այսօր հարազատների հետ տեսակցություն կապահովվենք», - ասաց Նիկոլ Փաշինյանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ

Հունիսի 15-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցան պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գլխավոր քարտուղար Յելգա Մարիա Շմիդտի հետ:

Վրաստանի նախագահի նստավայրում Օրբելիանիների պալատում կայացած հանդիպմանը, Սալոմե Զուրաբիշվիլին եւ Յելգա Մարիա Շմիդտը պայմանավորվեցին Վրաստանում անցկացնել կին առաջնորդների խորհրդածրոյով՝ կանանց դերը խաղաղության ու անվտանգության մեջ թեմայով:



Կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանում առաջիկայում կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն ու ընդգծել ընտրություններում դիտորդական առաջնությունները (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հունիսի 12-ին հայ-վրացական Բագրատաշենի անցակետում կայացավ Հայաստանի եւ Վրաստանի մաքսային ոլորտի պատասխանատուների հանդիպումը:

Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալներ Շուշանիկ Ներսիսյանի եւ Աշոտ Մուրադյանի գլխավորած պատվիրակությունը, հայկական կողմի հրավերով, ընդունեց Հայաստանի սահմանային



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՈՒՐԱՆ ԵՄ, ՈՐ 15 ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՎՐԱՍԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՎԵՐԱՂԱՐՁԱՆ ԻՐԵՆՅՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ»



«Ուրախ եմ, որ իմ ակտիվ աջակցությամբ եւ մեր ռազմա-

վարական գործընկեր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի ներգրավմամբ, ադրբեջանական կողմը ազատ է արձակել հակամարտության ընթացքում ձերբակալված 15 հայ քաղաքացիների, որոնք Վրաստանի տարածքով վերադարձան իրենց ընտանիքներ»,- այս մասին ասված է նախարար Իրակլի Դարիբաշվիլու հայտարարության մեջ, որը հրապարակվել է կառավարության ղեկավարի ֆեյսբուքյան

պաշտոնական էջում: Վարչապետի խոսքով, հնարավոր է դարձել, որ հայկական կողմը ակադեմիական տարածքների վերաբերյալ կարելուր նյութեր համոզի ադրբեջանական կողմին: - Հետագայում, անհրաժեշտության դեպքում, մենք պատրաստ ենք օգնել մեր գործընկերներին եւ ակտիվ մասնակցել գործընթացներին ու նախելառաջ մարդասիրական խնդիրների լուծմանն ուղղված,- ասել է Վրաստանի վարչապետը:

ՎՐԱՍԱՆ - ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ԱՌԿԱ ԵՆ




Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 17-ին Բրյուսելում անցկացվեց ՆԱՏՕ-ի գլխավոր գազաթափողով:

Գազաթափողովից հետո հրապարակված 36 կետից բաղկացած հայտարարության մեջ խոսվում է նաեւ Վրաստանի մասին եւ այն, որ այլանսը ողջունում է Վրաստանի իրականացված զգալի առա-

ջընթացը բարեփոխումներում: Միժամանակ, փաստաթղթում նշվում է, որ Վրաստանի հարաբերությունները դաշինքի հետ պարունակում են բոլոր գործնական գործիքները՝ վերջնական անդամակցությանը նախապատ- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Ե

«ՎՐԱՍԱՆԸ» ՄԻԱՅՆ ՎՐԱՍԱՆՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՐ ԴԱՌՆԱԼ 100 ՏԱՐԵԿԱՆ



Հայրտ եմ, քանի որ անձամբ ինձ համար էլ «Վրաստանը» շատ սիրելի ու հարազատ է:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԱՌԱՋԻՆ ՀՈՆՈՐԱՐՍ «ՎՐԱՍԱՆԻՑ» ԵՄ ՍՍԱՑԵԼ ՈՒ ԲԼՈՎՆՈՑ ԳՆԵԼ

«Վրաստանն» առաջին տպագիր մամուլն է, որ տեսել եմ, շոշափել, կարդացել: Լրագրության հանդեպ իմ սերը նաեւ «Վրաստանն» է ձեւավորել՝ իր տարբեր ու հետաքրքիր հոդվածներով: Ի դեպ, առաջին հոնորարս էլ (որով մի բլոկնոտ եմ գնել), «Վրաստանից» եմ ստացել՝ մի փոքրիկ հոդվածի համար: Այն ժամանակ դեռ դպրոցական էի:



(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵԱԿ ՉԼԻՍՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քելությունների, հատկապես՝ ԵԱԿ դիտորդական առաքելության կարելությունը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Վրաստանի օկուպացված տարածքներում դեֆակտո ռեժիմի անցակետերի փակ լինելու պատճառով վատթարացած մարդասիրական իրավիճակին, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման ու առեւանգման փաստերին:

Վրաստանի վաչագետի եւ ԵԱԿ գլխավոր քարտուղարի հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի եւ ԵԱԿ-ի մի-

ջե համագործակցության հարցեր: Ընդգծվեց ԵԱԿ-ի նշանակալի մասնակցությունը Վրաստանում հակամարտության խաղաղ կարգավորման եւ պատերազմից տուժած բնակչության միջեւ վստահության վերականգնման գործընթացներում, ԵԱԿ-ի համանախագահների դերը ժնեի միջազգային բանակցություններում եւ միջադեպերի կանխարգելման եւ դրանց վրա արձագանքման մեխանիզմների ձեւաչափում:


Նշվեց, որ վրացական կողմը բարձր է գնահատում ODIHR-ի ներգրավվածությունն ընտրությունների դիտորդական

գործընթացում եւ պատրաստակամ է երկիրը առաջիկա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընդունել ODIHR-ի դիտորդների առավելագույն քանակը:

Հանդիպմանը ուշադրություն դարձվեց կառավարության աշխատակազմի մարդու իրավունքների քարտուղարության ակտիվ դերի եւ ներգրավվածության վրա՝ մարդու իրավունքների եւ զենդեքի վերաբերյալ ԵԱԿ-ի կող-

մից կազմակերպված միջոցառումներում:

ԵԱԿ-ի գլխավոր քարտուղարը բարձր գնահատեց Վրաստանի միջնորդությունը Կովկասում եւ վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու ներգրավվածությունն այս հարցում:



ԱՄՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ԺՆԵՎՈՒՄ ԿԱՅԱՑԱԿ ԲԱՅՂԵՆ-ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴՊՈՒՄԸ

Հունիսի 16-ին ժնեւում կայացավ ԱՄՆ նախագահ Զո Բայդենի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

Գրեթե չորսուկես ժամ եւ ընդլայնված կազմով տեւած բանակցությունների արդյունքներով կողմերն ընդունեցին համատեղ հայտարարություն, որտեղ նշված է, որ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը ցույց են տվել, որ նույնիսկ լարվածության ժամանակ նրանք կարող են առաջընթացի հասնել ռազմավարական ոլորտում կանխատեսելիության ապահովման, զինված հակամարտությունների ռիսկերի նվազեցման եւ միջուկային պատերազմի սպառնալիքի նվազեցման համատեղ նպատակների իրականացման գործում:

Այդ նպատակներին հասնելու համար Ռուսաստանն ու ԱՄՆ-ը մոտ ժամանակներս համատեղ երկկողմ երկխոսություն կսկսեն ռազմավարական կայունության շուրջ, որը կլինի առարկայական եւ եռանդուն:

ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ-ԱՄՆ ԲՐՅՈՒՄԵԼԻ ԵՎ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

Հունիսի 15-ին Բրյուսելում անցկացվեց յոթ տարվա ընթացքում առաջին՝ ԵՄ-ԱՄՆ գազաթաժողովը՝ Միացյալ Նահանգների նախագահ Զո Բայդենի մասնակցությամբ: Գազաթաժողովում եվրամիությունը ներկայացրեցին էվրահանձնաժողովի եւ եվրախորհրդի ղեկավարներ Ուրսուլա ֆոն դեր Լյայենը եւ Շառլ Միշելը, ինչպես նաև եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության գերագույն ներկայացուցիչ ժոզեպ Բորելը:

Գազաթաժողովը կոչված էր վերականգնելու հարաբերությունները Բրյուսելի եւ Վաշինգտոնի միջեւ: Կողմերը քննարկեցին նաև Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության համակարգում: Օրակարգում էին համավարակը, Չինաստանը, Բելառուսի ճգնաժամը, Ուկրաինայի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունները, իրանական միջուկային գործարքը, Թուրքիայի հետ հարաբերությունները: ԵՄ-ԱՄՆ ղեկավարների հանդիպմանը նախորդել էին Յոթի խմբի եւ ՆԱՏՕ-ի գազաթաժողովները:

ՄԱԿ

ՉԼԻՍՎՈՐ ԱՍՏՐԵՆՆ ԴԱՏԱՊԱՐՏԵՑՑՎԱԾ ՎՐԱՍԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՆԱԶՎԹՈՒՄԸ

Հունիսի 16-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը, 75-րդ նստաշրջանի շրջանակներում, ընդունեց Վրաստանի եւ 57 երկրների նախաձեռնած բանաձեւը՝ «Աբխազիայից, Վրաստան եւ Յիսինվալիի շրջանից/Յարավային Օսեթիա, Վրաստան բռնի տեղահանված անձանց եւ փախստականների կարգավիճակի մասին»: Այս տարի բանաձեւին աջակցեցին 80 պետություններ:

Վրաստանը նշված բանաձեւը ՄԱԿ-ի ասամբլեա է ներկայացրել 2008 թվականից: Բանաձեւը դատապարտում է Ռուսաստանի կողմից Վրաստանի օկուպացված շրջաններում բռնի ճանապարհով

իրականացրած ժողովրդագրական փոփոխությունները, հաստատում է փախստականների իրավունքը՝ էթնիկ պատկանելությունից զատ վերադառնալ սեփական տներ անվտանգ ու արժանապատվորեն, եւ ընդգ-

ծում է նրանց սեփականության իրավունքի նկատմամբ հարգանքի ու պաշտպանության անհրաժեշտությունը:

Բանաձեւը նաեւ կոչ է անում ժնեի բանակցությունների մասնակիցներին ակտիվացնել ջանքերը Վրաստանի օկուպացված շրջաններում անվտանգության եւ մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու ուղղությամբ, ինչը, իր հերթին, կնպաստի փախստական անձանց վերադարձին իրենց տներ:

ՎՐԱՍԱՆ - ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ԱՌԿԱ ԵՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րաստվելու համար: Բացի այդ, պատրաստակամություն կա մեծացնել աջակցությունը Վրաստանին: «Մենք դատապարտում

ենք Ռուսաստանի ընթացիկ գործողությունները՝ Ուկրաինայի եւ Վրաստանի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ անկախությունը խաթարելու հետ կապված: Մենք պար-

տավորվում ենք շարունակել աջակցել ԵՄ արեւելյան գործընկերների ինքնիշխանությանը, անկախությանն ու տարածքային ամբողջականությանը եւ աջակցել Ուկրաինային, Վրաստանին՝ բա-

րեփոխումների ճանապարհին: Մենք վճռականորեն որոշել ենք աշխատել Հարավային Կովկասում՝ խաղաղության եւ կայունության համար», -ասված է հայտարարության մեջ:

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցակետ ժամանած Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավարի տեղակալ Վլադիմեր Խունդաձեի գլխավորած պատվիրակությանը:

Օրակարգում աշխատանքային հարցեր էին, որոնք վերաբերում էին կորոնավիրուսով պայմանավորված ոչ սովորական տարվա ընթացքում եւ դրանից հետո մաքսային ոլորտում փորձի փոխանակմանն ու համագործակցությանը: Հան-

դիպման ժամանակ քննարկվեց նաև Վրաստանի ու Հայաստանի միջեւ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների միջազգային փոխադրումներին առնչվող էլեկտրոնային տվյալների մախնական փոխանակումն առավել արդյունավետ իրականացնելու հարցը:

Հայ եւ վրացի գործընկերները պայմանավորվեցին ակտիվացնել երկու երկրների համապատասխան ստորաբաժանումների գործակցությունը, ինչը դրական կանդրադառնա մաքսային կանոնների խախտման դեպքերի բացա-

հայտման եւ խնդիրների արագ լուծման գործընթացին: Նախատեսվում է երկու գործընկեր կառույցների փորձագետների՝ տեսակոնֆերանսների միջոցով մանրամասն քննարկել համատեղ աշխատանքների իրականացման տեխնիկական հարցերը:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել ակտիվացնելու գործում քայլերը՝ ավարտին հասցնելու նպատակով Բեռնարկղերի վերահսկողության ծրագրին Հայաստանի անդամակցության գործընթացը:

ԹԲԻԼԻՍԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ

«ՎՐԱՅԱՎԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ» ԵՎ «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ» ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԺՈՒՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂՈՒ




Ինչպես արդեն հաղորդել ենք, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումներից հետո, առաջին անգամ, հունիսի 16-ին, Երեւան-Թբիլիսի-Բաթումի ուղևորատար գնացքը ժամանեց Թբիլիսիի գլխավոր կայարան՝ ժամը 00:11-ին եւ 20 րոպեանոց կանգառից հետո՝ ուղևորվեց Բաթումի, ուր հասավ առավելագույն ժամը 07:30-ին: Թբիլիսիի կենտրոնական կայարանում գնացքը դիմավորեցին Վրաստանի երկաթուղու, Հայաստանի «Հարավկովկասյան երկաթուղու», ինչպես նաև Վրաստանի ֆինանսների նախարարության մաքսային ղեկավարման ղեկավարները, ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:

րավկովկասյան երկաթուղու» ղեկավարներին: Հանդիպմանը քննարկվեցին առկա մարտահրավերների դիմակայության եւ առաջիկա ծրագրերը: Կողմերը քննարկեցին Թբիլիսի-Երեւան երթուղով գնացքի երթուղային ուղևորական եւ բեռնատար վերսկսման, սակագնային քաղաքականության եւ փաստաթղթերի էլեկտրոնային փոխանակման հարցը: Օրակարգում դրված էր նաև սահմանային կայարան-

ներում գնացքների ընդունման գործընթացի բարելավման եւ կոնտեյներային փոխադրումների տեխնոլոգիայի բարելավման հարցը: Հայ երկաթուղայինների այցի շրջանակներում ստորագրվեց փոխհամագործակցության փաստաթուղթ, որը ստորագրեցին Վրաստանի երկաթուղու տնօրեն Դավիթ Փերածեն եւ «Հարավկովկասյան երկաթուղու» գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մելնիկովը:



Երեւան-Թբիլիսի-Բաթումի ուղևորատար գնացքի երթուղային վերսկսումը վերջին ժամանակների միակ իրադարձությունը չէ: Հունիսի 17-ին Վրաստանի երկաթուղու մեծածախ ղեկավարները հյուրընկալեցին Երեւանից ժամանած «Հա-



ՄԻՍՆ ԿԻՆՁԵ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅՐԱՔԱՐԱՔ

ԱՎԱՐՏՎԵՑ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԵՎ ՄԱՐՏԻ 9-Ի ՊՈՒՐԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ


Հունիսի 16-ին կայացավ Թբիլիսիի Մայրենի Լեզվի եւ Մարտի 9-ի պուրակների, ինչպես նաեւ Չոր կամրջի եւ Զարբրյուկենի կամրջի վերականգնված տարածքների բացման արարողությունը:

Նորացված տարածքները բացեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն: Բացմանը ներկա էին վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին եւ «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն: Բացման արարողությանը ելույթ ունեցան Կախա Կալաձեն, Իրակլի Դարիբաշվիլին: Նրանք խոսեցին ոչ միայն իրականացված նախագծերի մասին, այլեւ անդրադարձան մայրաքաղաքում

ծրագրված ենթակառուցային մյուս նախագծերին: Միջոցառումն ավարտվեց տոնական համերգով: Հիշեցնենք, որ նախագծի շրջանակներում վերականգնվել են երկու կամուրջները, կառուցվել են Մայրենի Լեզվի եւ Մարտի 9-ի պուրակները կապող հետիոտնային թունելները, լայնածավալ կանաչապատման աշխատանքներ են իրականացվել պուրակներում եւ փոխվել է գույ-



քը, կարգավորվել են վերգետնյա եւ ստորգետնյա հարթակայությունները, կազմակերպվել է արտաքին լուսավորության ցանցը, բարելավվել է հետիոտնային տարածքը, Չոր կամրջից դեպի Քուր գետի ափը երկու թեքադրոպաներ են կառուցվել եւ նոր մակերեսային ճանապարհներ են կառուցվել: Նախագծի արժեքը կազմել է մինչեւ 27 միլիոն լարի:



85 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻՑ

Ինչպես նշեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Համաշխարհային բանկի հետ ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի՝ Վրաստանը 85 միլիոն եվրոյի արտոնյալ օգնություն կստանա համաճարակից տուժած ձեռնարկություններին աջակցելու համար:

Բացի այդ, Վրաստանի պատվաստումների ծրագիրը կամրայնորվի Համաշխարհային բանկից ստացված 34,5 միլիոն դոլարի ծավալի լրացուցիչ ֆինանսավորմամբ:

- Վրաստանը առաջին երկրներից մեկն էր, որը Համաշխարհային բանկի կողմից արագ ֆինանսական աջակցություն ստացավ 80 միլիոն դոլարի տեսքով, որը վճռական դեր խաղաց երկրի քաղաքացիներին օգնելու գործում: Ես կցանկանայի մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին COVID-19-ի դեմ պայքարում մեզ հետ գործադրած բոլոր ջանքերի համար,- ասաց Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՄՇԱԿՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

«Վրացական երազանքից» խորհրդարանի պատգամավոր Շալվա Պապուաշվիլու հայտարարությամբ, կառավարող կուսակցությունը նախատեսում է հետ կանգնել սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որն ընտրական շեմը 5 տոկոսից իջեցնում է 3 տոկոսի եւ թույլ է տալիս ստեղծել չորս հոգանոց խմբակցություններ:

Պատգամավորի խոսքով՝ նոր օրինագիծը համահունչ է կլիմայի Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ մշակված փաստաթղթին: - Գիտեք, որ ապրիլի 19-ի համաձայնագիրը վերաբերում է մի շարք հարցերի, որոնք պահանջում են փոփոխություններ Սահմանադրության մեջ: Դրանք են ընտրությունների շեմը եւ գլխավոր դատախազի ընտրության կարգը: Դա նաեւ հնարավորություն կտա ստեղծել չորս հոգանոց խմբակցություններ,- ընդգծեց Շալվա Պապուաշվիլին եւ հավելեց, որ ընդդիմության հետ քննարկե-

լուց հետո կորոշվի, թե որն է լինելու խորհրդարանական ընտրությունների նվազագույն շեմը: Հիշեցնենք, որ ապրիլի 19-ին, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ, իշխող կուսակցության համաձայնություն ձեռքբերվեց: Համաձայնագրով 5 տոկոսանոց շեմը պետք է նվազի, խորհրդարանում հնարավոր կլինի ստեղծել 4 հոգանոց խմբակցություններ, իսկ գլխավոր դատախազ նշանակելու կանոնները կփոխվեն:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ՆԵՐՎԱՅԱՎԵՅԻՆ ԵՆԹԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐԸ

Հունիսի 17-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի Կունբուրդո գյուղում կայացավ Վրաստանի խորհրդարանի տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեի արտագնա նիստը, որին մասնակցեցին օրենսդիր մարմնի տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեի նախագահ Սոզար Սուբարին, ագրարային հարցերի կոմիտեի նախագահ Նինո Ծիլոսանիան, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների առաջին փոխնախարար Իլիա Բեգիաշվիլին, մունիցիպալային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Գիորգի Շենգելիան, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Սամվել Մամուկյանը, Սմբատ Կյուրեղյանը, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր Յուրի Ունանյանն ու Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահներ Նաիրի Իրիցյանն ու Վահե Արոյանը, քաղաքապետեր եւ սակրեբուլոյի նախագահներ, էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներ:

Նիստում Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարությունը ներկայացրեց տեղեկատվություն «Տարածաշրջանում իրականացված նախագծերի հիմնադրամի» կողմից ֆինանսավորված 2019-2020 թվականներին տարածաշրջանում անցկացված աշխատանքների հաշվետվությունը, ինչպես նաեւ առաջիկա նախագծերն ու ծրագրերը: Արտագնա նիստում մասնակցություն քննարկվեց ողջ տարածաշրջանում եւ առանձին մունիցիպալիտետներում ծրագրված ենթակառուցային նախագծերի ընթացքը: Նշվեց, որ վերջին ութ տարիների ընթացքում տարածաշրջանում ծախսվել է 630 միլիոն լարի, որի նշանակալից մասն ուղղված է եղել ճանապարհային ենթակառուցվածքների վերականգնմանը, նոր ճանապարհների ջրամատակարարման եւ ոռոգման համակարգերի կարգավորմանը: Նիստում հայտարարվեց, որ 2012 թվականից տարածաշրջանում կառուցվել է 27 մանկապարտեզ, 8 մանկապարտեզ կառուցման փուլում է, կառուցվել է 11 դպրոց, իսկ 6 դպրոց կառուցման փուլում է: Տարածաշրջանում կառուցվել է 750 կմ

ճանապարհ, ինչի համար, ընդհանուր առմամբ, ծախսվել է 544 167 606 լարի: Ինչպես նաեւ շեշտ դրվեց այն փաստի վրա, որ տարածաշրջանի բնակչության 75 տոկոսն արդեն գազիֆիկացված է: Բացի այդ, պատկառելի գումարներ են ծախսվել գազիֆիկացման, մանկապարտեզների եւ դպրոցների շինարարության ու վերանորոգման, ինչպես նաեւ տեղական բյուջեներից ֆինանսավորվող նախագծերի իրականացման համար: Արտագնա նիստում նշվեց, որ նշանակալի առաջնահերթություն է նախադրուցական հաստատությունների կարգավորումը: Առանձին մունիցիպալիտետների բոլոր բնակավայրերն ապահովված են մանկապարտեզներով: Նշվեց, որ 2012 թվականից տարածաշրջանում կառուցվել է 27 մանկապարտեզ, 8 մանկապարտեզ կառուցման փուլում է, կառուցվել է 11 դպրոց, իսկ 6 դպրոց կառուցման փուլում է գտնվում: Արտագնա նիստում ենթակառուցային նախագծերի հետ մեկտեղ, քննարկվեցին տարածաշրջանում առկա հիմնախնդիրները: Նշվեց, որ սուր մարտահրավերներից է գազիֆիկացումը, ինչը



մյուս տարածաշրջանների համեմատությամբ, տեղական ծնունդն ու կլիմայական խիստ պայմանների դեպքում, արտակարգ նշանակալից է: Նշվեց, որ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում վիթխարի ներուժ կա ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ՝ զբոսաշրջության ուղղություններով: Առկա է

տարածաշրջանի բնակչության հարցի կարգավորման հնարավորություն, ինչի համար անհրաժեշտ է համակարգված մոտեցում ցուցաբերել երկրամասի զարգացման հարցում:

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության մամլո ծառայություն

ԼՈՒՐԵՐ՝ ՆԻՆՈՑՄԻՆԴԱՅԻ ՍՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻՑ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղում ակտիվ ընթանում են նոր մարզադահլիճի կառուցման շինարարական աշխատանքներ, որոնք իրականացնում է մրցութային հաղթած «Ինտեր» ընկերությունը:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 127 226 լարի: Նինոծմինդայի մունիցիպալիտետի տեղական բյուջեի ֆինանսավորմամբ սկսվել են Մեծ Խանջալի գյուղի մինի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքները, ինչը նախատեսում է մինի մարզադահլիճի ծածկույթի արհեստական կանաչապատում, որի վրա կծախսվի 24 700 լարի:

Հունիսի 13-ին, Նինոծմինդայի քաղաքապետարանում, «Գերասի կլիմիկայի» 3 սրտաբան բժիշկներ անցկացրեցին մարդասիրական-բարեգործական ակցիա, որն անցկացրել էին նաեւ 2021 թվականին: Մեկ օրվա ընթացքում նրանք էխոկարդիոգրաֆիկ հետազոտություն անցկացրին տարբեր տարիքի ավելի քան 80 երեխաների համար: ՍՐԲՈՒԴԻ ՍԱՆԱՄՅԱՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կազմակերպչական բաժնի պետ

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԿԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 15 ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նյութերի համաձայնումը աղբյուրներից հանդիպելով: «Հատկանշական է, որ Վրաստանի ռազմավարական գործընկերոջ՝ ԱՄՆ-ի ակտիվությամբ եւ գործընթացում Վրաստանի զգալի մասնակցությամբ առանձնահատուկ քայլ է ձեռնարկվել Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության միջավայրի բարելավման ուղղությամբ: Այս փաստը զգալի խթան կհաղորդի Վրաստանի անմիջական հարեւանների միջոցով լարվածության հետագա նվազեցմանը:

Վրաստանը պատրաստ է ապագայում, անհրաժեշտության դեպքում, հնարավորինս օժանդակել իր գործընկերներին եւ ակտիվ ներգրավվել գործընթացներում, առաջին հերթին մարդասիրական խնդիրների լուծման ուղղությամբ»,- ասված է հայտարարության մեջ:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱՔԻՇՎԻԼԻ. «ՀՊՈՐՏ ԵՄ, ՈՐ ՎՐԱՍԱՆԸ ՎԵՐԱԳՐՈՒՄ ԵՍԵՆ ՄԵԴԻԱՏՈՐԻ ՊՆՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ»



Վրաստանի նախագահ Սալոսե Զուրաքիշվիլին, արձագանքելով Վրաստանի միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջոցով ձեռքբերած հունամիտար պայմանավորվածությանը, նշել է, որ ինքը հպարտ է մեդիատորի պատմական դերը Վրաստանին վերադարձնելու կապակցությամբ:

- Վրաստանը վերադարձրեց մեդիատորի պատմական դերը, ԱՄՆ-ը ու եվրամիությունը վերադարձան Կովկաս: Վստահության վերականգնումը կայուն խաղաղության կարեւորագույն քայլն է,- նշեց Վրաստանի նախագահը:

ՍՈԶՐ ՍՈՒԲԱՐԻ. «ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՎՐԱՍԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՎ ԿԱՍԱԵԼ ԻՐ ԴԵՐԸ»

Վրաստանի խորհրդարանի տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեի նախագահ Սոզր Սուբարին հայտարարեց, որ երբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջոցով ոչ մի կապ գոյություն չունի, ապա նման կապը կարող է հաստատվել միայն թբիլիզի



սալի ու ցանկալի գործընկեր երկու երկրների համար: Այս երեք երկրների միջոցով Վրաստանը միակն է, ով խաղաղ հարաբերություններ ունի երկուսի հետ: Երբ Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը ազատվեցին Ռուսական կայսրությունից, հենց թբիլիսին դարձավ երեքի մայրաքաղաքը, Անդրկովկասյան Դաշնության մայրաքաղաքը: Հենց այստեղ հավաքվեցին երեք անկախ պետությունների կառավարությունները, երբ հռչակեցին պետական անկախությունը եւ խորհրդային ժամանակահատվածում էլ թբիլիսին միակ կապող օղակն էր ոչ միայն Հարավային Կովկասի, այլեւ ողջ Կովկասի մշակութային եւ գիտական կենտրոնը: Հիմա, ակնհայտ է, այդ գործառնությունները վերացվել են, սակայն հիմա, 30 տարվա ընթացքում, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջոցով ոչ մի կապ գոյություն չունի, ապա նման կապը կարող է հաստատվել միայն թբիլիսիի միջոցով: Ե՛հ շտ է, գոյություն ունի Միմսկի խումբը, որտեղ գրուցում են հակամարտության կարգավորման ուղիների մասին, սակայն մարդկանց միջոցով, լրագրողների ու ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով կապերի տեսանկյունից եւ քաղաքական բանակցություններին թբիլիսին միակն է, որտեղ նման կապերը իրականացվում են:

Դեռեւս շատ են չկարգավորված հարցերը, քանի որ հիմա է սկսվում հակամարտության հետագա կարգավորումը, եւ Վրաստանը կարող է կատարել իր դերը:

«ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ»

«ԱՄՆ-ը ողջունում է Ադրբեջանի կողմից 15 հայ ծեր-բակաված անձանց ազատ արձակումը եւ Հայաստանի իրենց ընտանիքներ վերադարձը»,- այս մասին նշված է Վրաստանում ԱՄՆ դեսպանատան հայտարարության մեջ:

«Մենք նույնպես ողջունում ենք Հայաստանի որոշումը՝ Ադրբեջանին տրամադրել կարելու տեղեկատվություն, որը կնպաստի մարդասիրական՝ ականագերծման աշխատանքների անցկացմանը եւ նոր գոհերի կանխմանը: Մենք երախտապարտ ենք վարչապետ Իրակլի Դարիբաշվիլուն եւ Վրաստանի կառավարությանը այն կարելու դերի համար, որը տարածաշրջանի բնակչությանը մոտեցնում է խաղաղ եւ բարեկեցիկ ապագային:

Միացյալ Նահանգները ուրախ է աջակցել նման գարգացումներին եւ հուսով է, որ դա ճանապարհ կբացի համագործակցության համար»,- ասված է դեսպանության հայտարարության մեջ:

ԴԱՎԻԹ ԶԱԼԿԱԼԻԱՆԻ. «ՎԵՃԻՆ 2-3 ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ ՎԵՐԱԳՐՈՒՄ ԵՍԵՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ»



Ինչպես հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին, Վրաստանը վերջին 2-3 ամիսներին աշխատում էր ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ՝ Հայաստանի ու Ադրբեջանի հետ՝ 15 ռազմագերիների տեղափոխման ուղղությամբ:

- Արտակարգ կարելու իրադրություն է, ելնելով նրանից, որ Վրաստանի իշխանությունը, անձամբ վարչապետը նշանակալի դեր կատարեցին տվյալ բացառիկ հարցի կարգավորման գործում: Վերջին 2-3 ամիսների ընթացքում մենք շատ ակտիվ աշխատում էինք մեր հիմնական ռազմավարական գործընկերոջ՝ ԱՄՆ-ի հետ այս արդյունքը իրագործելու համար: Ես շատ ուրախ եմ, որ այսօր մենք ունենք նման արդյունք եւ մեկ անգամ եւս ուզում ենք շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին, ռազմավարական գործընկեր Ադրբեջանին, Հայաստանին, որոնք շատ լավ գիտակցում են, որ անհրաժեշտ է փոխադարձ քայլեր ձեռնարկել տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղություն եւ կայունություն հաստատելու համար,- ասաց Դավիթ Զալկալիանին՝ հավելելով, որ առաջին քայլը կատարվել է, Հայաստանի 15 քաղաքացիները Վրաստանի տարանցումով անցան Հայաստան:

ՆՈՐ ԳԻՐՔ

«ՄԵՐ ԿԱԹՈՒԼԻԿ ՆԱԽՆԻՆԵՐԸ»

Կաթոլիկությունը քրիստոնեության ճյուղերից է, որը տարածված է աշխարհի շատ երկրներում: Վրաստանում Կաթոլիկ եկեղեցու հետեւորդները՝ կաթոլիկները, ազգությամբ վրացիներ են հայերը բնակվում են թբիլիսիում, Քութայիսիում, Փոթիում, իսկ երկրի հայ կաթոլիկները հիմնականում Սամցխե-Ջավախեթիում, մասնավորապես՝ Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցխայի հայաբնակ գյուղերում: Մեր երկրի հայ կաթոլիկները երգում են կաթոլիկությունը ընդունածների ժառանգներն են: Ժողովրդախոսակցական լեզվում այս տարածաշրջանում բնակվող կաթոլիկներին անվանում են «Ֆրանց»: Ոմանք այդ բառի ստուգաբանությունը կապում են Կիլիկյան Հայաստանում Ֆրանցիսկյան միաբանության քարոզչների հետ (Ս.Արոյան, «Համառոտ պատմություն հայ կաթոլիկ»): Ավելի ուշ, եվրոպացի բառը գուցե վերաբերում է կաթոլիկ լինելու հետ, եւ քանի որ հայերի մեջ կաթոլիկություն են տարածել եվրոպացի քարոզչները, «Ֆրանց»-ը ձեռք է բերել երկրամաստություն՝ միաժամանակ ցույց տալով ե՛ւ կրոնական, ե՛ւ էթնիկ (ֆրանսիացի, իտալացի) պատկանելությունը: Թեմայի հետ կապված՝ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Ախալի գանաթլեթա» թերթի ս.թ. հունիսի 9-ի համարում զետեղված «Նախագիծ՝ Մեր կաթոլիկ նախնիները» վերնագրով նյութը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի սկզբին մենք սկսեցինք իրականացնել «Մեր կաթոլիկ նախնիները» շատ հետաքրքիր եւ արդիական նախագիծը: Նշյալ նախագիծը նախաձեռնելու հնարավորություն տվեցին Վրաստանում եւ Հայաստանի Հանրապետությունում Սուրբ Աթոռի Առաքելական նվիրակն ու Կովկասի Լատինա-կաթոլիկ առաքելական վարչությունը: Մեզ ակտիվորեն աջակցում է նաեւ Վրաստանի կաթոլիկ երիտասարդական կենտրոնը, որը պատասխանատու է երկրի ողջ տարածքում կաթոլիկ ծխական համայնքում ընթացող երիտասարդական ակտիվությունների համար: Մեր նախագիծը կենսագործելու կարելու միջոցը համանուն ժողովածուն է, որի նախաբանում նշում ենք. «Այս փորձիկ ժողովածուն ակադեմիական բնույթի չէ կրում, ոչ էլ եղել է մեր նպատակը: Միակ ցանկությունը՝ շարքային վրացի կաթոլիկ սրտին ուղերձներ հասցնելն է, որ մենք հզոր արմատների վրա աճած ծառ ենք, որը տապալել անկարող են անգամ ժամանակի չար քամիները...»: Ժողովա-

սահմաններում ժառանգություն է թողել: Հետեւաբար, «Մեր կաթոլիկ նախնիները» մատենաշար է, որի առաջին մասը նվիրված է 6 կաթոլիկ ազգային նշանավոր անհատների, որոնք խոր հետք են թողել Վրաստանի պետական ու հասարակական կյանքում: Այս ժողովածուն հատկապես արդիական է այն տեսանկյունից, որ ընթացիկ տարում լրանում է Ջաքարիա Փալիաշվիլու ծննդյան 150-ամյակը: Մեր ժողովածուն ներառում է ոչ միայն հայտնի մարդկանց կենսագրական տեղեկությունները, այլեւ բարեկամության, հավատքի, օգնության, աջակցության հրաշալի պատմությունների ամբողջություն է: Գիրքը լրիվությամբ այլ տեսանկյունից է ներկայացնում այն անհատներին, որոնք շատ թե քիչ կապ են ունեցել սեփական հավատքի ու եկեղեցու հետ ու հաճախ հենց հավատքի հիման վրա էլ ձեւավորել իրենց արժեքներն ու գործունեությունը: Ժողովածուն յուրաքանչյուր անհատի ակնարկին կցված են տարբեր հեղինակների հետաքրքիր անդրադարձումները: Պետք է խոստովանենք, որ մեր հասարակության մեջ հաճախ անտեսվում է այս անհատների կաթոլիկ լինելը եւ այն փաստը, որ նրանք Կաթոլիկ եկեղեցու հետեւորդներն են: Վրաստանի կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսական փոխանորդ Հայր Գաբրիել Բրազգանտիմը, որը ծառայում է Քութայիսիում, իր անդրադարձման մեջ սրտի ցավով նշում է. «Այդուհանդերձ, չէի կորցնի այն կասկածի նշանակությունը, որ մեր շատ հայտնի կաթոլիկների կյանքը միշտ գրվում, փոխանցվում, պահվում ու մշակվում է պատմագրության նույն կլիշեներով (շաբլոնային ձեւերով), որոնք 19-րդ դարի վերջից ի վեր անընդմեջ կրկնվում են: Քանի կաթոլիկ է հասարակական, կյանքի տարբեր բնագավառներում հիշատակության արժանի կարելու գործը արել,

ԻՐԱՎԻ ԶԱՎԱԽԻՇՎԻԼԻ
Սոցիալական գիտությունների դոկտոր,
Սուլխան-Սաբա Օրբելիանու անվան հասարակական գիտությունների
ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԱՎՈՓԱՇՎԻԼԻ
Աստվածաբանության մագիստրոս,
Վրաստանի կաթոլիկ երիտասարդական կենտրոնի քարտուղար